

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԼԻ ՇԱՐՈՒԹ ՕՐԵՐԸ — Հա-
տը 40 փարա :
Բաժանորդագիրն ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 դրշ : վեցամսեայ 23 դրշ : եռամսեայ 12 դրշ :
Գաւառաց համար տարեկան 30 դրշ : վեցամսեայ 26
դրշ : եռամսեայ 14 դրշ :
Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի : Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք :
Գաւառներէն դրողմաթուղթ կ'ընդունուի :
Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի : այնուհետեւ
բաժանորդագիրն չը վճարողը կը դադրի թերթ ընդու-
նելէ :
Ծանուցման տողը 2 դրշ :

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿ Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԻՒ ՀԱՄԱՐ ԳԻՄԷԼ
ԱՆ ՏՅՈՐԷՆ-ՀՐԱՄԱՐՈՒԼԻՅ՝ ՏՈՎԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պօլիս, Լսկի-Չապթիէ, Պրետրեան Տպարան
درعليه ده اسكي ضبطيه زقاغده بربريان مطبعه سنده
« زايك » غزته سي مديري بالا قاشيان حوونان
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻԻ 28

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

25 ԿԱՐՏ 1891

Ա. Զ. Գ. «ԾԱՂԻԿ» Ի

«Ծաղիկ»-ի ներկայ թիւը թէեւ չարաթ
առաւօտ կազմէ պատրաստ, և մէկ կողմն
ալ տպուած էր, բայց անակնկալ պատ-
ճառաւ մը տպագրութիւնը դադարեցնել
հարկ լինելով, այսօր միայն կարելի ե-
ղաւ ամբողջացնել և հրատարակ հանել,
ուստի մեր յարգոյ բաժանորդաց ներո-
ղամտութիւնը կը խնդրեմք այս ակամայ
յապաղման համար :

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գաւառաւորնակ ազգային վարչութեանց
նկատմամբ կարծէ տեղեկութիւններ հա-
ղորդել ծաղիկի ընթերցողաց : Գաւառը
ուր մեր ազգայինը կը բնակին, արժանի
են հոգաւորութեան և խնամոց, մանաւանդ
այսօր ժամանակի մը մէջ, երբ շնոր-
հիւսիսէն ժամանակի մը մէջ, երբ շնոր-
հիւսիսէն ժամանակի մը մէջ, երբ շնոր-
հիւսիսէն ժամանակի մը մէջ, երբ շնոր-

Գաւառաց մէջ գրեթէ ամենէն աւե-
լի խնամոց արժանի է վան, որ երկար
ժամանակներէ ի վեր զանազան կուսակ-
ցութեանց բաժնուած կը տալանակի :
Արդարեւ վանայ Հայք հակառակ իրենց
հոծ բազմութեան՝ մինչեւ ցայսօր կանո-
նաւոր ազգային վարչութեան մը տէր չեն
եղած : Հոգեւոյս Իգնատիոս սրբազանէն
յետոյ չունեցաւ վան առաջնորդ մը, որ
արժանապէս վարելով տեղեկան վարչու-
թիւնն այսինքն Գաւառական երեսփո-
խոնութիւնն ու կրօն և Գաղ. ժողովնե-
րն, գոհացնէր թէ՛ Կեդր. վարչութիւնը
և թէ՛ տեղացի ժողովուրդը : Հետզհետէ
իրարու յաջորդեցին Պատրիարքական փո-
խանորդներ և կամ առաջնորդական տե-
ղապահներ, որոց անունները թուել ա-
ւելորդ է : Վանայ գաւառն ունի իւր կա-
րեւորութիւնն, քանի որ բազմաթիւ վա-
նորայք կան, որոց օրինաւոր մատակա-
րարութիւնն ո՞րքան արդիւնաբեր կրնայ
լինել ազգին և Հայաստանիսցեւ կեդրե-
ւոյն : Այդ վանորայք, որոց մէջ նշանա-
ւոր են Աղթամար և Վարադ, է՞ր այսօր
ազգին չժանոթանան իրենց օգտակար
ժառանգութեամբն, որոց համար հիմնադ-
րուած և չեն պահուած են մեր նախնիք-
ներէն :

Ինչպէս գիտենք, թէեւ ի լրոյ, այդ
վանքերէն շատերն այսօր միաբանական

ուխտ անգամ չունին, և նոցա ելեմտից
տեսչութիւնը կը վարեն անպատասխա-
նատու կամ վարդապետ մը և կամ քա-
հանայ մը, և որ ցաւալին է, մինչեւ ան-
գամ սոսկ աշխարհական մը : Այդ Կեդ-
րոնական վարչութեան պարտքն է այդ
վանօրէից վիճակին տեղեկ լինել եւ
կարգադրութիւններ ընել, այլ սակայն
Սահմանադրութեան հաստատութեանէն
ի վեր, այսինքն երեսուն տարիներէ ի
վեր բնաւ ազգու և գործադրելի տնո-
րինութիւն մը տեսնուած չէ, մինչդեռ
Սահմանադրութեան շնորհիւ զանազան
ժամանակներու մէջ կազմուած են վա-
նօրէից խորհուրդներ, և լուծած են ինչ
ինչ կարգադրութիւններ, այլ սակայն
ապարդիւն կարգադրութիւններ, քանի
որ ցայսօր իսկ վանօրէից վիճակն աւելի
քան երբեք վատթարացած է :

Է՞ր ուրեմն վան զուրկ մնայ առաջ-
նորդէ : Այդպիսի հայաբնակ գաւառ մը
ուր շատ մը դպրոցներ կան և այլ բարե-
պաշտական հաստատութիւններ ի՞նչու
անխնամ մնան, ինչու չ'ունենան ժիւր
և արթուն հովիւ մը, որ հոգեւորապէս մի-
թախէ ժողովուրդը կենաց բանը քա-
րողելով զգուշացնէ մերայիններն այլևայլ
մարտական շաւիղներէ, փրկելով նոցա
հոգիները, նախագահելով ժողովոց՝ զայ-
նրս վարէ այսպիսի եղանակաւ : Երբ տի-
րէ սէր և միաբանութիւն, և համբաշխ
կարգապահութիւն, տեղական կառա-
վարութեան հետ բարեւոք յարաբերու-
թիւններ մշակելով սիրելի միշտ ընծայէ
ազգն Օսմանեան տէրութեան, որոյ բա-
րերար հովանոյն տակ պահպանած է
ցարդ իւր գոյութիւնն :

Վարչական տնօրինութիւն մը բերկ-
րաւիթ է աստանօր յիշել, այն է վանայ
ազգային ժողովները կամ ի նորոյ ընտ-
րելով կազմակերպել, և կամ եթէ արդի
ժողովներն օրինաւոր են և միայն պա-
կանալ ժողովականներ կան, հաստա-
տել ժողովները և պակասեալ ժողովա-
կանաց տեղ նորեր ընտրել տալով՝ ձեռ-
նարկել առաջնորդական ընտրութեան :
Այս պաշտօն յանձնուած է Ղալաթիոյ
քարոզիչ Ալփադեան Տ. Յովսէփ վարդա-
պետի, որ ինչպէս կը յիշեն ընթերցողը,
հերոս նմանօրինակ պաշտօն մը վարեց ի
Զմիւռնիա :

Չորեքշաբթի օր Բովսէփ վարդապետ
Ազգ. Կեդր. վարչութեան Գաղ. ժողո-
վոյ ներկայանալով իւր վերջնական կամ-
քըն յայտնեց ի մասին ստանձման սոյն
պաշտօնի, պայմանաւ որ իւր ուղեւո-
թեան ծախքն իրր հարիւր յիսուն ոսկ-
ւոյ գումար, կանխաւ վճարուի : Գաղ.
ժողովն անմիջապէս հեռագրելով ի վան,
հրամայեց որ ընդօրոյթ գէթ հարիւր
ոսկւոյ վճարելի փոխանակադիր մը զըր-
կուի ի հայթայթման ծախսոց նորընտիր
Պատրիարքական փոխանորդին վանայ :

Վանէն յետոյ նշանաւոր է և Կարին,
որ նմանապէս առաջնորդական ընտրու-
թեան պէտքն ունի այժմ : Արդի երու-
սաղեմի Պատրիարք Ամեն Տ. Յարութիւն
Սրբազանի առաջնորդական երկար պաշ-
տօնավարութենէ յետոյ՝ Կարին իրարու
ետեւ յաջորդող առաջնորդներ ունեցաւ
որոց վրայ խօսիլ և նոցա պաշտօնավա-
րութեանց և հրաժարմանց նկատմամբ
գրել չ'արժէր : Այժմ Կարնոյ ազգային
վարչութիւնն գիմած է ի Պատրիարքա-
րան և ինդրած, որպէս զի առաջնոր-
դական ընտրութեան ձեռնարկէ յանձին
Տ. Ղևոնդ եպիսկոպոսի, որ առաջնորդ
է Խարբերդի միանգամայն, և Պատրի-
արքական փոխանորդի պաշտօնով այժմ
անդ ի Կարին կը գտնուի :

Պատրիարքարանն Կարնեցնոց այս
բաղձանաց առջեւ շուարած կայ, և կը
սպասէ անշուշտ Ղևոնդ եպիսկոպոսի
կարծիքը կամ վերջնական հաւանութիւնը
լսել, որպէս զի ըստ այնմ առաջնորդա-
կան ընտրութեան հրահանգ ու հրաման
յղէ ի Կարին :

Փոքրիկ գաւառ մը ևս այս օրերս ու-
նի առաջնորդական միջոց էպ մը, և քա-
նի որ խոշոր գաւառաց վրոյ կը գրեմք,
մանր գաւառներն ևս պէտք չեն մնալ
անտես :

Բաբերդ ունի իւր առաջնորդն որ է
Ամբրոսիոս վարդապետ Ռուբինեան, ժա-
մանակէ մը ի վեր այդ փոքրաթիւ ժողո-
վրդէն ևս կը հասնին հանրագրեր, որոց
ոմանք նպաստաւոր են առաջնորդին և ո-
մանք աննպաստ : Պատրիարքարանն ճա-
րահատած Բաբերդցոց թախանձագին
ստիպումներէն, հրաման զրկեց Երզնկա-
յի Առաջնորդական տեղապահ Բարթողի-
մէոս վարդապետի, որ երթայ ի Բաբերդ
թեմական խնդիրները կարգադրէ եթէ
կարելի է, իսկ եթէ ոչ պաշտօնական քըն-
նութիւն բանալով, հարկ եղած տեղե-
կագիրն ի Պատրիարքարան փութացնէ ի
տնօրինութիւն :

Իզմիր գոնէ այժմ բարեբաղդ է, վա-
սըն զի հուսկ ուրեմն իւր նորընտիր ա-
ռաջնորդն հաճեցաւ մեկնիլ աստի : Գրու-
թիւնը որք հետզհետէ կը հասնին, կը
ժանուցանեն թէ փառաւոր ընդունելու-
թիւններ եղած են Արսլանեան Ներսէս
վարդապետի, և պաշտօնական ազգային
մարմինը և կառավարական պաշտօնայք
չեն զլացած յարգանք և պատիւներ չը-
ռայել նորին գերապատուութեան : Եթէ
Իզմիրի ազգայինը միաբան սրտով բոլո-
րին իրենց նորընտիր առաջնորդին շուրջ,
սիրելի է հաւատալ թէ Իզմիր յաջո ազ-
գին պիտի ունենայ այն նշանակութիւն
որպէս ունէր երբեմն յառաջնորդութեան
Ամեն Տ. Մեղրիսեղեկ Սրբազանի :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

ԿԻՒԻԻԻՆ, 27 Փետ. 1891. — Սերաստիոյ կուսակալութեան տակ և գաւառագլխէն Չէ ժամ հեռաւորութեամբ Գ. Կարգի գայմագամը քաղաք մի է Կիւրիւն, շինուած մի նեղ ու երկար ձորի մէջ ծառաստաններով ու բուսականներով զարդարեալ, հոս նշանաւոր է շալագործութիւնը որ կ'արտադրէ պարսկական շալերու նման շալեր: Եւրոպական Ֆասօն և ֆանէլանման կերպաններ, սենեկի ընտիր փողոցներ, վերմակի երեսներ, պատուհանի վարագոյրներ, սեղանի, օրօրոցի և ննջարանի ծածկոցներ և ասոնց նման շատ ընտիր ու ճաշակաւոր գործուածքներ որք մինչև արքայական պալատներն զարդարած են:

Ժողովուրդն ընդհանրապէս պանդխտութեան երթալով վաճառականութեամբ կ'ըզբաղի, որոյ վասն ցրուած են Տաճկաստանի չորս կողմը: մնացեալ մասը կ'ըզբաղի շալագործութեամբ: Եւրագործութեան նշանաւոր գործարանատէր և վաճառական է Մեծ Սարգիս էֆ. Մինասեան:

Նշանաւոր է նաև այս տեղ Մինասեանի պանդուկը որ կը գերազանցէ մօտակայ քաղաքաց պանդուկները: Անուանի են այս տեղի Ֆիւնէ Երուսիմ և Կարմրախայտ ձուկն (ալապալը), ջրի Ակն, ծով անուանեալ լըճակն, կէօկ բուցար անուն հիանալի լիճն որ աննման զրօսովայր մի է և ունի սքանչելի տեսարան: Այժմ, Եւրոպացի չրջիկներ՝ առանց ծովի ժայռերու հնութիւն և դրերն տեսնելու և կէօկ բուցարի տեսարանն դիտեալով՝ չեն անցնիր: շատ գեղեցիկ զրօսովայրեր և մաքուր օդ ու ջուր ունի քաղաքն զոր կ'արժէ այցելել:

ԴԻՏՈՂՆ

ԵՐԶՆԿԱ, 9 Մարտ 1891. — Այսօր գարնանամուտ է, բայց ձմեռը կը շարունակէ տակաւին: Լեռ, գաւառ համակ ձիւնով ծածկուած են, այնպէս որ եթէ ձիւնը մի քանի օրէն հալելով չ'ոչնչանայ, կրնայ միաստակար հետեանքներ ունենալ թէ՛ երկրագործին և թէ՛ ժողովրդեան համար, որք արդէն սոյն արտասովոր ձմրան աղբաւ թողոր նեղութիւնները կրեցին:

— Մշոյ, Բաղէշի, Պուլանդզի, Ալաշկերտի և Վանայ կողմերէն եկող քիւրտ պէյերը՝ որք երկու ամիս է Վեր աստ էին, այսօր ի Կ. Պոլիս ուղեւորեցան առաջնորդութեամբ տեղւոյս զօրանոցին հրամանատար գնդապետ Ալի պէյի որ մինչև Տրապիզոն պիտի ընկերանայ անոնց: Յետ որոյ կայսերական շոգենաւը յանձնելով, պիտի դառնայ աստ: Սոյն պէյերուն հետ ի Պոլիս կ'ուղեւորին նաև Մէրտինի շրջակայներէն եկող Արաբ աշիրէթներու պետերէն հաշակաւոր Մըստօ աղա և այլք: Սաջինը մեծ հարստութեան տէր է, այնպէս որ 2500 լիւրայի չափ տարեկան ոչխարի տուրք կը գանձուի իրմէն, բան մը որ Անատոլիի մէջ խիստ հազուագիւտ է:

Էրթոզուլ Ղազի վաշտին սոյն ընտրեալ հեծեալք արդարև ամէն տեսակէտիւ փայլուն են: Իրենց համազգեստը կը նմանի Հունգարացի Հիւսար ձիաւորաց համազգեստին:

Մարտ 2ի շաբաթ օրը Վսեմ Միւշիւր Զեքի փաշայի հրամանաւ մեծ զօրահանդէս մը կատարուեցաւ տեղւոյս զինուորական պաշտօնատան հրապարակին վրայ: Քիւրտ ցեղապետք իրենց հետեւորդներով մասնակցեցան սոյն զօրահանդիսին, որ չքեղ եղաւ յոյժ:

արդարև տեսնելու արժանի էր սոցա ձիու վրայ ըրած շարժումները, սրախաղութիւնքն և նիզակախաղութիւնքն, որք ընդհանուրին հիացումը գրաւեցին, իրենց կանոնաւոր շարժումներով, երբ հաշակաւոր և քաջ հեծեալ գնդապետ Ալի պէյի հրամանացը կը հնազանդէին: Կ. Պոլսոյ բնակիչք առիթ պիտի ունենան տեսնելու զայնս ի մօտոյ և սքանչանալու:

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(Շար. Գալստրդ բուէն)

10.

Խորհրդաւոր կալ շաւաքացեղ Պատարագը կ'սկսի վերաբերութեամբ նուիրացն, այսինքն նշխարով և գինով պատրաստուած սկիհն ընծայարանէն վեր բերելով ի սուրբ Սեղանն, որոյ վերայ Պատարագը պիտի մատուցուի: Բայց յառաջագոյն սարկաւագն երախայները կ'արձակէ եթէ լինին: չեղած ժամանակն ալ ձեւակերպութիւնը կը կատարէ ասելով. «Մի ոք յերեխայից, և այլն»: Ս. Յակովբայ որպէս և մեր հին պատարագամատոյցն զոր Լամբրոնացին պահած է իւր Մեկնութեան մէջ՝ աւելի բացորոշ կերպով կ'ըսէ. «Որ երախայքէք երթայք», և յետոյ «Մի ոք և այլն»: Հին ժամանակ երախայներէն զատ նաև ապաշխարողք և անապաշաւ մեղաւորք այս միջոցին դուրս կ'ընէին կամ կ'արտաքսուէին: Ս. Ներսէս Լամբրոնացին այս սովորութեան դադարման պատճառն լաւ կուտայ՝ թէ Առաքելական դարու մէջ երբ մեղաւորք և ապաշխարողք սուրբ Խորհուրդէն կ'արտաքսուէին՝ այդ յանդիմանութիւնն անոնց վերայ ամօթ և տրտմութիւն կը բերէր որ անարժան գլուխուած էին սուրբ Պատարագի: Բայց յետոյ երբ մարդիկ աստուածսիրութենէ՝ պաղեցան և սրբազան պատամանց և խորհրդոց համար այն հին եռանդն կորսուեցաւ, այդ անարգանքը այլ ևս հին աղբեղութիւնը չունեցաւ, և յիսարէն զմարդիկ յապաշխարութիւն և յառաքինութիւն մղելու՝ անոնց սիրան աւելի կը քարացնէր, և երբ իրենց անարժանութեան համար խորհրդաւոր արարողութիւններէ կը մերժուէին, ոչ այլ եւս տրտմութեամբ և ամօթով կ'երթային, այլ ուրախութեամբ և անտարբերութեամբ: յետ այնու այլ ևս բնաւ եկեղեցի չէին դար, ոչ ալ իրենց չար ճանապարհէն կը դառնային: Այս պատճառաւ նախնի սուրբ հարք այս բարի սովորութիւնը որ մեծամեծ չարիքներու պատճառ լինել կ'ապառնար՝ թողին, և հրամայեցին որ ապաշխարողք միան մինչև Ողջոյնի ժամանակ, երբ հաղորդուողք պէտք էր դուրս ելնէին և գաւթից կեցած աղօթէին («առ դուռնս ելէք և աղօթեցէք»): Բայց այս զիջումն ալ հետզհետէ բաւական չեղաւ և մինչև իսկ չարաչար ալ գործածուեցաւ, ինչպէս յայտնի է Հայոց՝ Յունաց ու Լատինաց հետ ունեցած վիճարանութեանց մէջ որ նոքա զմեզ միշտ կը պախարակէին թէ Պատարագի ժամանակ ժողովուրդը եկեղեցւոյ դուռը կը կենայ յիսարանակ ներս մտնելու և հոն աղօթելու: Եւ թէպէտ հիմա այս խտուածութիւնն ալ բոլորովին վերացած է, դժբաղտաբար չենք կարող ասել թէ այն չարիքներն ալ վերացած են, որոց պատճառաւ այս փոփոթութիւնը եղան, և մինչև իսկ մեծագոյն չարեաց տեղի տուած են որոց վերայ երկաբարանելն մեր ներկայ նպատակէն դուրս է:

Ասացինք թէ Խորհրդաւոր Պատարագն այս տեղէն կ'սկսի. և հետեւաբար պատարագչի բուն քահանայագործութեան պաշտօնն եւս հիմա կ'սկսի: Ուստի եթէ պատարագչին եւ պիսկոպոս լինի և իւր եպիսկոպոսական ըզգեստով ու զարդերով զարդարուած լինի՝ այդ ամէնը կը հանէ մէկ կողմ կը դնէ և սոսկ քահանայի մը պարզ զգեստով կը մնայ: սաղաւարտն ու հոգաթափներն ալ կը հանէ ի նշան խոնարհութեան ու երկիւղածութեան: Նոյնպէս Սեղանի շուրջը գտնուող սարկաւագունք և օգնականք ամենքն ալ պէտք է հոգաթափին և աւելորդ զարդերն չհանեն: Այսպիսի ահաւոր նախապատրաստութիւններէ յետ սուրբ նուէրներն հանդիսապէս՝ խնկարկութեամբ և մոմեղինօք կը բերեն քահանային, որ նաև մեծ երկիւղածութեամբ և զինի խնկարկութեան առնելով կը դնէ Սեղանի վերայ, և քօղը բարձրացունելով՝ առանձինն սկիհը կը խնկարկէ և յետոյ մատները կը լուայ գրեթէ մի և նոյն նշանակութեամբ ինչպէս առաջին լուացումն ձեռաց: Այս միջոցին սարկաւագը կ'սկսի քարոզ կարգալ և յորդորել զժողովուրդն որ երկիւղածութեամբ և խղճի մտօք և կատարեալ հաւատով աղօթեն առաջի սրբոյ սեղանոյ, և մի և նոյն ժամանակ քահանայ պատարագչը նուէրները, այսինքն դեռ չը սրբադործուած նշխար ու գինին կ'ընծայէ Աստուծոյ, ասեւով. «Ընկա՛ առ ի մէջ զառաջագործութիւնս զայս, և աւարտեա՛ զսա ի խորհրդականութիւն Մարմնոյ և Արեան Միածնի քոյ. դեղ թողութեան մեղաց պարգևեա՛ ճաշակողացս զհացս զայս և զրաժակս»:

Սրբագործութեան պատրաստութեան մի մասն է նաև Ողջոյնը, որ իրագործումն է սարկաւագի ազդարարական քարոզին թէ «մի՛ խղճիւ և գայթակղութեամբ» կենանք Աստուծոյ Սեղանի առջև, «այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով և այլն»: և միանգամայն կ'ուսուցանէ զմեզ թէ այս մեր վարուց ուղղութեան շարժառիթն ու սկզբնապատճառն լինելու է՝ Քրիստոսի մեր մէջ յայտնուիլն և զմեզ այնչափ սիրով սիրելն, որով՝ Աստուած գոլով՝ այնքան խոնարհեցաւ մեր մէջ բազմեցաւ և մեզ իրաւունք տուաւ զինքը պաշտելու և երկնային սերովքից նման զնա սրբաբանելու: Յետոյ սարկաւագի կրկին ազդարարութեամբն և ժողովրդեան խոնարհութեամբն տակաւ առ տակաւ կը մանենք Պատարագի ամենէն նուիրական մասին մէջ, զոր մենք յարմարաբար կրնանք կոչել (և յառաջ ալ քանի անգամ կ'ոչեցնենք) Մրբագործութիւն: Իսկ Յոյնք կ'ըսեն անա՛փօրա կամ պոօ՛սփօրա որ կը նշանակէ սոսկ Պատարագ:

(Շարունակելի) ԹՈՐՈՍ Տ. Ի. ԶՈՒՂԱՅԵՑԻ Վարժապետ Աստուածաբանութեան

ԽԱՐԴԱԽԵԱԼ ՅՕԴՈՒԱԾ

Ասկից իբրև երկու ամիս առաջ յօդուած մը գրած էի «Ասլանեան Աշխարհագրութիւն» խորագրով յորում ի վեր հանելով հանդերձ սոյն դասագրքի յատկութիւնքն, ցոյց տուած էի նոր հրատարակեալ այլ աշխարհագրութեան մը՝ Մարգարեան էֆէնտիէ՝ բազմադիմի սխալներն ու զանազան թերութիւններն: Այս յօդուած ներկայացուցի «Արեւելք» խմբագրութեան որ յայտնեց թէ՛

բարոյական ազդեցութիւնն անուանուի խիստ սահմանափակ կը լինի, երբ այսպէս միջավայրի հակազդեցութիւնը կրէ:

Բայց երթադրեմք թէ իրերն աւելի լաւ վիճակի մէջ լինին. ամենէն պարկեշտ միջավայր մը, խիստ պարզ, բայց խիստ բարեբարոյ ժողովրդական ընտանիք մը երեւակայեմք: Դաստիարակութիւնն զոր կուտայ ընտանիքն այդ պայմանաց մէջ, որչափ ալ լաւ լինի, պարզապէս չարունակուելու չէ ուսուցչին միջոցաւ: Սա պարտի աւելին և լաւագոյնն ընել. պարտի ուրիշ բան ընել: Եւ արդարեւ, ի՞նչ է ժողովրդեան դասուն պատկանող մարդոց կամ ծնողաց մեծագոյն մասին խոտէլը, նոյն իսկ այն բացառիկ պայմանաց մէջ զորս երթադրեցինք լաւ լինել: Մնողը կը ջանան ընդ իրենց զաւակաց աւանդել սովորութիւններ. նոքա գոհ կը լինին, երբ տղան կը գործէ իրենց բաղանջաց համաձայն և չգործէր ինչ որ կ'արգելէն նմա: Այս դաստիարակութիւնն է ապէս հնաւանդ է, և այս պատճառաւ կը համարուի ստորին, նոյն իսկ եթէ այդ հնաւանդ դաստիարակութիւնն ունենայ լաւ բնութիւն և թեւադրուի ընտիր զգացումներէ: Դաստիարակը պարտի նախ և առաջ կատարել նմանօրինակ աշխատութիւն մը. զօրացնել մանկան բարի սովորութիւններն և չարունակ մաքառիլ նորա վատ սովորութեանց դէմ, բայց պարտի ասկէ աւելին ընել. մանկան տալ նոր և փափկագոյն սովորութիւններ, և եթէ յարմար է՝ աւելի բարձր ճաշակներ: Առաջին տարիներուն մէջ, մանաւանդ առաջին ամիսներուն մէջ, իւր աշխատութիւնն հոս կը վերջանայ, և զօրեղապէս պիտի խնդրեմք անկէ, որ նախ և առաջ խոյս տայ վերացեալ բանաձևերէ: Եթէ տարեկան հասակին մէջ, տղան չունի դեռ ամէն այն բարի սովորութիւններ, զորս պարտի ունենալ, և ունեցածներն իսկ չեն աճեցնում, զօրաւոր որքան պարտին լինել: Պէտք է չարունակել դաստիարակութիւնն, կազմելով նորա բնութիւնն ի բարին, յանգէտս իւր ազդելով նմա՝ առ այսպէս ասել՝ գործելու և զգալու ուղիղ կերպեր: Ընդհանուր իմաստ ունեցող խրատներ ունայն պիտի լինէին այս տարիքին մէջ. խրատեցուցիչ ու ցամաք են այդպիսի խրատք, վասն զի վերացեալ են. ուստի կը վնաս առանց ազդեցութեան:

«Մարդիկ, կ'ըսէ Մոնթաներ, քաջարի ու բազմիկ չեն դառնար անմիջապէս պերճ բանաստեղծեան մը ի լուր, ո՛չ ալ նոյն հետայն երաժիշտ կրնան լինել ընտիր երգի մը ի լուր...»: Պէտք է նախ աշակերտութիւն ընեն երկար ու հաստատ վարժութեամբ: Մեք ևս այս խնամք, և ուղղութեան ու կրթութեան համար այս հոգատարութիւն պարտիմք տալ մերայնոց: «Բայց ուսուցչին լիովին կատարած չլինիր իւր պարտիք՝ այսպէս հոգատար լինելով միայն բարոյական ուղղութիւն մը տալու մանկան: Որքան ալ ընտիր լինի սովորութիւն մը, ուրիշ բան մը կայ դեռ որ աւելի կ'արժէ և որ ունի բարոյական մեծ յարգ. այդ է խորհրդածութիւնն, որով միայն կարելի է ցոյց տալ լուսավոր ու ազատ գործունէութիւն, կամ, եթէ կ'ուզէք, պիտի ըսեմ. կայ սովորութիւն մը որ միւս ամէն սովորութիւններէ՝ գեր ի վեր է և որ պսակն է ամէնուն, այն է սովորութիւն խորհելու ըրածին և ընելիքին վերայ, սովորութիւն խոհալու, լուսաւորելու իւր ուղին, առաջնորդուելու սկզբամբ, սովորութիւն գիտութեամբ և կամուս ընելու ինչ որ

կը կարծուի թէ լաւագոյնն է: Ահա թէ ի՞նչու համար դաստիարակին գործը չը սահմանափակուի ծնողաց գործն ձեռք առնելուն և զայն չարունակելուն մէջ: Պարտի վարժութեան և անդադար գրգռել մանկան խորհրդածութիւնը և մշակել նորա բանականութիւնը. բան մը՝ որ խիստ անկարեւոր համարուած է յաճախ ընտանեաց մէջ: Դաստիարակը պարտի մանկան ուսուցանել մտածելու ընդհանուր եղանակներ, ողջմտութեամբ դատելու ընդհ. կանոններ. աւելի ընդարձակ զգացում մը՝ իւր պատասխանատուութեան նկատմամբ: Եթէ կ'ուզէք որ մանուկն վարժուի ու է բան մը ըրած ատեն, միշտ հարցնել թէ ո՞րն է բարին կամ ո՞րն է չարը, պէտք է անտարակոյս զինել զնա ընդհանուր խրատներով բարւոյն և չարին նկատմամբ. և ճամարտապէս աւանդել նմա բարոյական ուսուցում մը: Մինչեւ աստիճան մը, արդարեւ, բարոյականը կարելի է ուսուցանել, մինչեւ իսկ մանկան. եւ նախնական վարժարանէն սկսեալ պէտք է որ այս ուսումը լինի տեսական, որպէս զի լինի ընդհանուր և բարձր: Պէտք է որ տղան իւր հետ տանի բարոյական ճամարտ ծանօթութիւններ, այսինքն յստակ գաղափարներ և հաստատուն սկզբունքներ, որք առաջնորդ լինին նմա կենաց մէջ: Մեծ արուեստը դաստիարակութեան մէջ չափազանց դաստիարակելը չէ. եւ այն ատեն չափազանց դաստիարակած չեմք լինիր մանուկն, երբ անդադար չեմք ձկեր զնա հնաւանդ սովորութեանց առջեւ՝ ո՛րքան ալ լաւ լինին այդ սովորութիւնք, երբ առաքինութիւնն բոլորովին կազմ ու պատրաստ չեմք հարկադրել իւր կամաց վրայ և ո՛չ ալ չինուած դատողութիւններ՝ իւր խղճին վրայ: Վերջապէս կուգայ վայրկեան մը (և կանուխ կուգայ) յորդմ պէտք է կոչուի ընել իւր բանավարժութեան, որպէս զի զարգանայ իւր դատողութիւն և փայլի իւր խիղճ: Պարտուց զգացումը պէտք է մշակուի նորա մէջ և լուսավորուի, քանզի առաջին դաստիարակութիւնն, որ երբեմն կարող եղած է չափազանց վառել այդ զգացում, գրեթէ միշտ շատ անորոշ վիճակի մէջ թողած է զայն, եթէ չէ եղած: Իւր պարտականութիւն կատարելու տրամադիր լինելն է մեծ բան, բայց պէտք է միանգամայն ճանչնալ զայն: Նախնական վարժարանի աշակերտն, պէտք չէ մոռնալ, կը վերաբերի գրեթէ միշտ այնպիսի միջավայրի մը յորում իմաստակութիւնք կը զեւան, յորում ընթացիկ բարոյականն է չլիթ և կոշտ. պէտք չէ որ մանուկն դպրոցէն իւր հետ տանի այնքան ճշգրիտ որքան բարձր առածներ, որոց կարող լինի դիմել ի հարկին: Դոքա՛ իւր ապաստանարանն պիտի լինին յետոյ. նոքո՛ք կարող պիտի լինի դիմադրել իւր միջավայրի ապականութեան կամ կեղծ իմաստութեան. նոքա պիտի պաշտպանեն զինք յուր սովորութեանց վնասակար վերադարձին դէմ:

«Մտացդ մէջ թող գտնուին, կ'ըսէ մեզ Մարք-Օրէլ, այն կարճ, հիմնական առածներէն, որք անմիջապէս պայծառութիւն մը տան հոգեւոյդ:» Այն սրողակի սկզբունքներ՝ զորս միանգամ լաւ ըմբռնած եմք, ինքնին կը ներկային մեր մտաց, երբեմն իսկ խիստ բարեգէտ կերպիւ. այսպէս նոքա՝ գրեթէ հակառակ մեր կամաց՝ զերծ կը կացուցանեն զմեզ բազում վրիպումներէ:

Թարգ. ԵԻԳԻՆԻ ՄԻՆԹԱՆՃԵԱՆ
Աւակետուի Մեզպ. Վարժարանի

ՓՐԱՆՍԵԱՆ ԸՆԴԳԵՄՈՒԹՅՈՒՆ ՊԵՐԳԵՐԻՔ

«Ժէ դարն, որպէս կ'ըսէ Ռ. Ժուլիֆիէ, Փրանսական ազդեցութեան դարն է, յորում բարձրացան քաղաքական գերիշխանութիւնը, կրօնական իշխանութիւնն և դասական գրականութիւնն»: Այս դարն կ'սկսէր 1598 ին, երբ Հենրիկոս Դ. վերջ կուտայր ներքին խռովութեանց և կրօնական պատերազմաց, և կը վերջանայր 1715 ին, երբ Լուդովիկոս Ժ. Կ. կը մեռնէր և նոր իմն Եւրոպա կը ծնանէր, վարչական այլ եղանակաւ, և հասարակաց ճայնն իւր կշիռը կը գտնէր: Եւ իրաւամբ կրնանք զայն կոչել Փրանսական ոսկեդարի դար:

1630 ին, վալանթէն Գոնրատ՝ Լուդովիկոս Ժ. Կ. արքունեաց խորհրդական քարտուղարն՝ իւր շուրջը համախմբեց համալսարանաց ուսուցիչներն և այլ գրադէտներ՝ յորս էր հոշակաւոր Արքայն Պուասսուպէս, և գրական ընկերութիւն մի կազմեց: Այս Արքայն առիթ ունեցաւ ընկերութեան աշխատութեանց վերայ խօսիլ ծիրանաւորն Ռիչլէօի, որոյ ձեռքէն էր, որպէս յայտնի է, Փրանսայի վարչութեան ղեկն: Ռիչլէօ ուրախացաւ, զգալով ապագայ օգուտն՝ յօժարակամ իւր պաշտպանութեան ներքեւ առաւ այս նորակազմ ընկերութիւնը, որ 1634 Մարտ 13 ին պատրաստեց իւր կանոնադիրը, զոր վաւերացոյց Ռիչլէօ: Իսկ 1635 Յունուար 12 ին, արքունի հրովարտակաւ հաստատուեցաւ այս ընկերութիւն՝ յանուն «Փրանսական Ակադեմիայի» որոյ անգամը կոչեցան «40 Անմահք»:

Ակադեմիա, ի հունմ, էր իմաստասիրական վարժարան Պլատոնի ի պարտիզին Ակադեմիոսի: Այս անունն՝ առ յապալս՝ արուեստաւ Գրական, Գիտական և Գեղարուեստից հաստատութեանց կամ ընկերութեանց, յորոց կը բաղկանայ «Փրանսական կաճառն»:

Անդրանիկն է Փրանսական Ակադեմիա, որ 1638 ին ձեռնարկեց՝ Շարլէի ծրագրով՝ «Փրանսերէն լեզուի բառարանի» պատրաստութեան: Այս բառարանին Ա. տպագրութիւնն երեւցաւ 1694 ին, Բ.՝ 1717, Գ.՝ 1740, Դ.՝ 1746 ին, ընդ խնամով Տիւզլուի. այս տպագրութիւնն՝ ըստ Վիլմէնի է գանձ մի Փրանսերէն լեզուի. Ե.՝ 1798 ին, Զ.՝ 1835 ին Վիլմէնի ճառով և Է.՝ 1877 ին, Սելլէսթր տը Սասի խնամօք: Փրանսական Ակադեմիան, բայց ի բառարանէն, յօրինած է քերականութիւն, պերճախօսութիւն և բանաստեղծութիւն: Իսկ, 1858 ին, սկսաւ հրատարակել Փրանսերէն լեզուի պատմական բառարանը, որոյ մի քանի տետրակք ի լոյս ելան:

Ըստ բանից Ե. Փ. Տիւզլուի՝ Ակադեմիոյ Փրանսերէն լեզուի մատուցած բազմաթիւ օգուտներէն մին եղած է հեղինակաց վարձատրութիւնը: Զառաջինն՝ Ժան-Լուի-տը Պալ-զաք յղացաւ գրական ընտիր աշխատասիրութիւնները պսակելու գաղափարն, և, 1635 ին, կրօնական պերճախօսութեան պարգեւ մը սահմանեց: Բելիսոն որոշեց բանաստեղծութեան երկամեայ պարգեւը: Բայց մեծագոյնն եղաւ Մոնթէյնի պարգեւն՝ կտակելով Ակադեմիոյ 600,000 Փրանք, որուն հասութիւն պիտի պսակուէր « ընկերութեան բարիք մատուցանող աշխատասիրութիւն մի » կամ « Փրանսացի աղքատ մի » որ առաքինութեամբ փայլած էր: Այս այն պարգեւն է զոր Ակադեմիան իւր տարեկան հանդիսաւոր նստին մէջ, ի 25 Օգոստոս, կը բաշխէ արժանաւորաց:

1660 ին, սահմանեցաւ ընդունելութեան ճառի սովորութիւնն: Ընդ երկար, ընդուն-

նեղութեան ճառի սովորական ձեւն էր դը-
րուատել Ակադեմիոյ հիմնադիրները: Սակայն
վոյթէն կատակարարութեամբ վերջ տուաւ
այդ հին սովորութեան: Իսկ այժմեան ընդու-
նեղութեան ճառից նշանաբանն է գովել իրենց
նախորդներն կամ խօսիլ իւր ճիւղին պատ-
կան նիւթոյ վերայ:

Ֆրանսական Ակադեմիան ունէր մշտնջե-
նական քարտուղար մի: Այս պաշտօնը վարե-
ցին Տիւրգոտ, Կոնդորսէ, Մարմոնթէ, Սուաւ,
Ռայնուա, Օթէր, Աստրիէ, Առնօ, Բարէն,
և այլք: Գամիլ Տուսէ:

Ֆրանսական կաճառին Բ. դասն է Բարո-
յական և Քաղաքական գիտութեանց Ակադե-
միան (40 անդամք), զոր հիմնեց Ազգ. Հա-
մախօմի Ժողովը (Convention): սորա քար-
տուղարն է Ժիւլ Սիմոն:

Գ. Դասն է Արձանագրութեանց և Դեղեցիկ
Դպրութեան Ակադեմիան (40 անդամք), զոր
հիմնեց Դոլպէն, 1663 ին, որոյ նպատակն էր
պատմական և հնախօսական հմտալից աշխա-
տասիրութիւններ հրատարակել:

Դ. Դասն է Դիւնքեանց Ակադեմիան (65
անդամք), հիմնեալ Գոլպէնէն, 1666 ին:
Սորա մշտնջենական քարտուղարք են Պերթ-
լօ և Պէրթրան:

Ե. Դասն է Դեղաբուսից Ակադեմիան
զոր հիմնեցին Մաճառէն և Գոլպէն: Սորա
մշտնջենական քարտուղարն է Վիգոնթ Զէնրի
Տըլլապուտ:

Այս Ակադեմիայք միացան, 1796 ին, յա-
նուն Ֆրանսական կաճառի: Մէն մի Ակադե-
միա ունի իւր անկախ օրէնք: Բաց ի Ֆրան-
սական Ակադեմիայէն, միւս Ակադեմիայք կը
պարունակեն ազատ Ակադեմիականներ, օտա-
րազգիներ:

Կաճառին պալատը կը բարձրանայ գեղա-
րուեստից կամուրջին ծայրը, Գետոյն ձախ
ափը: Այդ հոյակապ շէնքն, նախ, էր Մաճա-
րէնի վարժարանը:

Ֆրանսական Ակադեմիայն ի շնորհս բազ-
մաթիւ առատաձեւն պարգեւաց, որոշած է
21 հետեւեալ պարգեւներն, որոց բաշխումը
ինքն կ'որոշէ:

Ա. Տարեկան պարգեւ.

1. Պարգեւ պերճախօսութեան,
2. Պարգեւ Մոնթէյոնի (բարոց պատ-
կանող օգտակար գործի մը համար).
3. Պարգեւ առաքինութեան (1000 Փը-
րանք, պարգեւ Մոնթէյոնի).
4. Պարգեւ առաքինութեան և անձնուի-
րութեան. (պարգեւ Սուռիէօի),
5. Պարգեւ առաքինութեան 6 մեդալիոն
600 Փրանքի, (Պարգեւ Մառի Լանի).
6. Պարգեւ քաջասիրտութեան և անձնուի-
րութեան, 1000 Փրանքի, (Կիմոնի հիմնա-
դրութիւն).
7. Պարգեւ Գոլպէնի, Ֆրանսական պատ-
մութեան վերայ պերճապօս գրութեան մը հա-
մար.
8. Պարգեւ Թէրուանի, պատմական լա-
ւագոյն աշխատասիրութեան մը համար:
9. Պարգեւ Մարտէլէն Կէրէնի (5000 Փը-
րանք), նկարադրաց բարձրացման համար:
10. Պարգեւ Արքան Տէրէսուզի (4000
Փրանք), Ֆրանսական բանասիրութեան հա-
մար:
11. Պարգեւ Մէլէ — Լաթու — Լանտ-
րիի, ի քաջալերութիւն գրական ասպարիզի
հետեւողաց:
12. Պարգեւ Լոսայի (350 Փրանք), առա-
քինութեան համար:

Բ. Երկամեայ պարգեւ.

1. Պարգեւ Ժուիի (1500 Փրանք), Ֆը-
րանսական բարոց աշխատասիրութեան հա-
մար.
2. Պարգեւ Մոնդինի (3000 Փրանք), ի
քաջալերութիւն գրական և ուսուցման աս-
պարիզի:

Գ. Եռամեայ պարգեւ.

1. Պարգեւ առաքինութեան (հիմնադրու-
թիւն Հանորէ տը Սուսի),
2. Պարգեւ Թիէրեան ի քաջալերութիւն
գրական և պատմական աշխատասիրութեանց.
3. Պարգեւ Կիզոյեան (3000 Փրանք),
պատմական աշխատասիրութեանց համար:
4. Պարգեւ Ժիւլ Ժանենեան (3000 Փը-
րանք), լատինական գրոց թարգմանութեան
համար:

Դ. Քառամեայ պարգեւ.

Պաթթոյեան պարգեւ, կանանց վերայ հը-
րատարակեալ ընտիր աշխատասիրութեանց
համար:

ԺԹ. Դարու վերջին քառորդին թողուած
էր տեսնել Հայ գրական հորիզոնին վերել
նորանշան տեսիլ մի: Անմահութեան ջերմա-
գութ գրիչն, գոգցես, Օգոստոս ամսոյ մէջ,
լուսափողի ճառագայթ մի կը փայլի թեւա-
ծելու մեր մատենագրութեան վերայ: Եւ սա
է անմահանուն Յովսէփ աղա Իգլորեան, որ
թողով բարենպատակ կտակ մի՝ մեր աղքա-
տիկ մատենագրութիւնը նոր խանդավառ
հոգով համակեց: Եւ անշուշտ մեր ոգեւո-
րեալ մատենագրութեանց իւր պտուղները
մեզ պիտի ընծայէ ամ ըստ ամէ:

Ըսել է թէ քայլ մ'ալ առինք պէպի
Եւրոպեան քաղաքակրթութիւն:

Խապիւղ

ԴԱԻԻԹ Յ. ԽԱՉԿԵԱՆ

Մեր բարեկամներէն Տօք. Անդրանիկ էֆ.
Թէրզեանի քոյր Ազն. Օրիորդ Էմիլի Թէր-
զեան չորեքշաբթի գիշեր ծաղիկ հասակի
մէջ կնքելով իւր մահկանացու կենաց ընթաց-
քը, հինգշաբթի օր յուղարկւորութեան
տխուր հանգէսը մեծ չքով կատարուեցաւ
Բերա. Ս. Երրորդութեան եկեղեցին: Հան-
գուցեալն իւր ուսումը առած էր խաղաղի
Ներսէսեան աղջկանց վարժարանին մէջ, ուր
սպա ազգային դաստիարակութեան գործին
անձնուէր մշակ մ'եղած էր: Իւր բարեմաս-
թիւնը անձամբ ծանօթ լինելով մեզ, ցաւօք
կը ծանելայանեմք իւր կորուստը և իւր Մեծ,
եղբորն ու ընտանեաց երկնից մխիթարու-
թիւնը կը հայցեմք:

ՆՈՐ ԳԻՒՏԵՐ

ԺԹ. Դարուն մէջ գիտութիւնք այնչափ
հսկայաքայլ կը յառաջիդիմեն, նա մանաւանդ
նոր գիւտերն այնչափ արագ կը յաջորդեն
միմեանց որ սոյն դարը նկարագրող որ և է
պատմագիր պիտի հարկադրի գէթ մասամբ
իւր պարզել գիտութեան դարուս մէջ ու-
նեցած յառաջգիմական ոգին: Եւ մեր վերնա-
գիրն այնչափ շատ գործածելու ստիպուած է
գիտական աշխարհն որ յատուկ թերթեր հաս-
տատուած են տալ այն:

Մեր մէջ մասնագիտական թերթեր ունե-

նալու անկարելիութիւնը փորձով հաստա-
տուած լինելով, ընթերցողաց հետաքրքրու-
թեան փոքր ինչ յագուրդ տալու համար մը-
տադրած եմ «Ծաղիկ»ի էջերուն մէջ մերթ-
ընդ մերթ խօսիլ նորանոր գիւտերու վրայ:

* * *

Դոյներու լուսանկարչութիւն. — Բարիզու
Գիտութեանց Ակադեմիոյ Փետր. 2ի նստին
մէջ ընդհանուր գիտութեան ճիւղին անդամ-
ներէն Պ. Լիւման իւր պաշտօնակցաց ներկա-
յացուց արեգական սկաւառակին մէկ նոր լու-
սանկար՝ իւր բոլոր գոյներովն առնուած:

Պ. Լիւման Արժաթեայ մածուածային պը-
րօմիւրի չոր տախտակ մը խողոջաւոր շրջա-
նակի մը անցուցած է, որուն խողոջին մէջ
սնդիկ լեցնելով՝ լուսոյ ճառագայթներուն
թափանցիկութեամբ՝ ժխտական, այսինքն իւ-
րաքանչիւր գոյն իւր լրացուցիչ մասերովը
ներկայացնող կաղապար մը ստացած է:

Առ այս, իւր պաշտօնակիցներէն Պ. Էտ-
մոն Պէքլըէլ յիշեցուց որ, 1848ին ինքն ևս
Ակադեմիոյ նոյն ճիւղին ներկայացուցած էր
համանման լուսանկարի մը փորձերը զորս ըս-
տացած էր արժաթեայ ենթաքլորականին մի-
ջոցաւ: Սակայն իւր այդ փորձերը միայն
մութին մէջ պահել կրցած է, որովհետեւ
լուսոյ մէջ մնալով կը կորսնցնէին իրենց գոյ-
ները: Ուրեմն Լիւմանի գիւտը մեծ օգուտ-
